

«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի
11.06.2025թ. թիվ 534 Ա/Մ հրամանի



ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ

ԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 9 05.06.2025թ.

ՎԱՆԱՁՈՐ

2025թ.

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում (այսուհետև՝ համալսարան) ուսանողական գիտական խմբակի ձևավորման և աշխատանքների կազմակերպման պայմանները:

2. Հիմնական հասկացություններ

1. Ուսանողական գիտական խմբակը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից և երկուսից երեք ուսանողներից (II, III կուրս) բաղկացած խումբ է, որն իրականացնում է հետազոտական աշխատանքներ՝ հաստատված թեմայով:
2. Ուսանողական գիտական խմբակները ստեղծվում են ուսումնական տարվա սկզբին և գործում են արտալսարանային ձևաչափով:

3. Ուսանողական գիտական խմբակի ստեղծման նպատակներն են՝

1. Խթանել ուսանողների հետաքրքրությունները գիտական հետազոտական աշխատանքի նկատմամբ:
2. Զարգացնել ուսանողների մոտ ստեղծագործական և վերլուծական մտածողություն, ինքնուրույն հետազոտելու կարողություն:
3. Ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները ուսանողների շրջանում:

4. Ուսանողական գիտական խմբակի ձևավորումը՝

1. Ուսանողական գիտական խմբակները ստեղծվում են ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու նպատակով:
2. Ուսանողական գիտական խմբակի հետազոտական թեման ընտրվում է ամբիոնի գիտահետազոտական ուղղություններին համապատասխան:
3. Ուսանողական գիտական խմբակի ղեկավարը խմբակի ստեղծման դիմում-հայտը ներկայացնում է գիտական աշխատանքների գծով պրոռեկտորին (Հավելված 1,2,3,4):
4. Գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը հայտը ուղարկում է ամբիոն և ամբիոնի նիստի դրական կարծիք ստանալու դեպքում այն ներկայացնում է ռեկտորի հրամանարգրմանը:
5. Տարբեր ամբիոնների և տարբեր մասնագիտություններից ուսանողների ներգրավման դեպքում թույլատրվում է համադրելավարումը:

5. Ուսանողական գիտական խմբակի ղեկավարը ապահովում է՝

1. Ուսանողական գիտական խմբակի ձևավորումը:




2. Խմբակի մասնակիցների աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և վերահսկումը:
3. Ըստ աշխատանքային պլանի կազմակերպում է քննարկումներ՝ առնվազն ամիսը երկու անգամ:
4. Յուրաքանչյուր կիսամյակ ամբիոնի նիստին ներկայացնում է զեկույց գիտական խմբակի կատարված աշխատանքների վերաբերյալ:
5. Կազմակերպում և վերահսկում է ուսանողների ինքնուրույն գիտական աշխատանքների ընթացքը:
6. Կազմակերպում է ուսանողների գիտահետազոտական աշխատանքների քննարկումներ:
7. Ուսանողներին նախապատրաստում է Ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներին:
8. Ղեկավարում է ուսանողների գիտական աշխատանքները:
9. Պարտավորվում է ապահովել ուսանողների մասնակցությունը մեկ գիտաժողովի և մեկ հոդվածի տպագրումը խմբակի գործունեության ընթացքում:

Ուսանողական գիտական խմբակի ղեկավարի աշխատանքները խրախուսվում են «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի աշխատողներին գիտական, ուսումնական, մշակութային, մարզական և կազմակերպական աշխատանքների համար խրախուսման կարգի համաձայն

6. Եզրափակիչ դրույթներ


Սույն կարգը ուժի մեջ է մտնում ՎՊՀ գիտական խորհրդի կողմից ընդունվելուց և Ռեկտորի կողմից հաստատվելուց հետո:



Հավելված 1

Ուսանողական գիտական խմբակի գիտահետազոտական թեմայի համառոտ բովանդակությունը

Ուսանողական գիտական խմբակի գիտահետազոտական թեման	
Թեմայի արդիականությունը	
Նպատակը և խնդիրները	
Ակնկալվող գիտական արդյունքները	
Գիտության սույն բնագավառի հետազոտությունների ներկայիս վիճակը	



Հավելված 2

Համառոտ տեղեկատվություն նախաձեռնող ուսանողական գիտական խմբակի ղեկավարի մասին

1.	Ազգանուն Անուն Հայրանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հեռախոսահամար	
4.	Էլեկտրոնային հասցե	
5.	Աշխատավայր (կազմակերպություն, հասցե, հեռախոսահամար, էլ. հասցե), զբաղեցրած պաշտոն	
6.	Ամբիոն	
7.	Կրթություն, որակավորում (կրթական որակավորում, ֆակուլտետ, բուհ)	
8.	Գիտական աստիճանը (առկայության դեպքում)	
Առաջարկվող կամ հարակից թեմայի վերաբերյալ առկա գիտական հետազոտական աշխատանքները:		

Հավելված 3

Համառոտ տեղեկատվություն ուսանողական գիտական խմբակի անդամների մասին

1.	Ազգանուն Անուն Հայրանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հեռախոսահամար	
4.	Էլեկտրոնային հասցե	
5.	Ֆակուլտետ, մասնագիտություն	


Ուսանողական գիտական խմբակի ղեկավարի ստորագրությունը

_____ անուն,, ազգանուն, հայրանուն

_____ ստորագրություն

_____ ամիս, ամսաթիվ, տարի

Ուսանողական գիտական խմբակի աշխատանքային պլան



	Աշխատանքի անվանումը	Գործողություններ	Ժամկետներ	Պատասխանատու ու (ներ)	Ցուցիչ(ներ)	Հաշվետու պարտադիր փաստաթղթեր
1						
2						
3						
.						
.						

_____ անուն, ազգանուն, հայրանուն

_____ ստորագրություն

_____ ամիս, ամսաթիվ, տարի